

درعیده غلطهده (میسس) غز قسی اداره خانه سه

Համակ կամ որ եւ իցէ գրուածին պէտք է ուղղել  
Առ Խմբագրութիւն

ՄԱՍՏԻՍ ՕՐԱԳՐԱՅ

Նորաստիակեան խան ԳԱՍԹՐՈՒՆ, Կ. ՊՈԼԻՍ

Direction du Journal "MASSIS",  
Galata, CONSTANTINOPLE

Les annonces sont reçues  
aux Bureaux du Journal



| ԲԱՃԱՆՈՐՐԱԳՐՈՒԹԻՒՆ                        |     |
|------------------------------------------|-----|
| Կ. Պոլսոյ համար Տարեկան գինն. արծ. ....  | 75  |
| » » Վեցամսեայ » » .....                  | 40  |
| Կաւաւներու » Տարեկան » » .....           | 100 |
| » » Վեցամսեայ » » .....                  | 50  |
| » » Նստմանայ » » .....                   | 25  |
| Ստոր երկրի » Տարեկան ֆրանս » » .....     | 25  |
| Ստոր երկրի » Տարեկան ֆրանս » » .....     | 10  |
| Կրամի փոխադէն փոսթայի փող կընդունո՞ւ 115 |     |
| ըրուշի փողը 100 ըրուշի հաշուով:          |     |

10 ՓԱՐԱ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԳՐԱԿԱՆ ԲԱՆԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ 10 ՓԱՐԱ

«ՄԱՍՏԻՍ»-Ի ԳՐԱՐԱՆԻՆԵՐԸ

ԵՐԶՆԱՆ. — ԳՐԱՐԱՆ ԵՏ. ԹԵՐԵՅԱՆ  
ՊՐԻՆՈՒՄԻ. — ԿԱՐԱՊԵՏ ԵՏ. ՄԱՆԵՃԱՆԵԱՆ  
ՆԻՊՈՒՄԻՍ. — ԿԱՐԱՊԵՏ ԵՏ. ՄԱՆԵՃԱՆԵԱՆ  
ՍՈՏՈՒՄՈՒՍ. — ՄԿԱՐՏԻՍ ԵՏ. ՄԵՆԵՃԱՆԵԱՆ  
ԲԱՆԱԳՐԱՅ. — ՅԱՆԱՆ ԵՏ. ՄԱՆԵՃԱՆԵԱՆ  
ՄՈՒՆԵ. — ՅԱՆԱՆ ԵՏ. ՄԱՆԵՃԱՆԵԱՆ

ՊԱՐՏԻՃԱԿ

Գեղեցիկ կոկիկ գիւղ մ'է, առատ  
ջուրով և մաքուր օդով. և եթէ ար-  
ուեստականը ամեն բանի մէջ միանար  
բնականին, իզմիտի չընկալայ գիւղերուն  
ամենէն մաքուրը պիտի ըլլար. բայց  
բոնիք անցողակի թէ փողոցներու մաք-  
րութեամբ, համար չի տարուիր արեւմտ  
Վաթ' որբան իր պահանջէ գիւղին մա-  
քուր օդը՝ փրկարար աղբեցութիւն  
մ'ընելու համար. բնականներուն առող-  
ջական վիճակին վրայ. Ս. Միլիտի բը-  
լուրէ՝ որուն ստորոտը շինուած է Պար-  
տիճակի, կը հովանաւորէ դայն, և նոյն  
ընթացքին բնած ջուրը, որ գիւղին ամե-  
նապէս է, կը զովայնէ ամառուան սառ-  
տիկ տարութիւնը, և այցելուներ կը  
հրաւիրէ դաւաճել ամէն կողմերէն,  
մանաւանդ իզմիտիները խառնածաճ-  
ի ածինն առթիւ գունդադուռը կը  
գիւղին հոն, իրենց քաղաքին խաղող  
տարութեան քիչ մը շունչ առնելու  
համար. է՛, ինչ որ ալ ըստի, վերջա-  
պէս սիրուն գիւղ մ'է Պարտիճակ, սի-  
րուն բնականներով, վառվառն երես-  
ներով, բաւական կորաքամակ ծերու-  
նիներով. փորձառու և փորձառուսոր  
փորք վճարականներով. զգալիաւ  
բար ծովուն ջուրը անմիջապէս չ'ըն-  
թեր դայն, իր եղբրները՝ գրեթէ մէկ  
ժամ հեռաւորութիւն ունին ծովէն.  
ասոր համար է որ բնակիչները սովոր-  
աբար միջակ արհեստաւորներ են, և  
կը լաւաւին ամէն արհեստներու գէժ  
հաց ճարելու համար. Պարտիճակ ունի  
1600—1700 տուն. կրօնքի երեք տե-  
սակներ կան. Հայ, Բողոքական, կա-  
թոլիկ, և յիշելու համար բողոքականին  
երկու կամ երեք յարանուանութիւն-  
ները՝ որոնք մուտ գտած են քանի մը  
լուսավոր Պարտիճակցիներու ուղեղին  
մէջ. վերջապէս լայն խցի տէր ըլլալը  
տարբեր բան է, այսպիսի միայն ըստի  
հոս, որովհետեւ թէ՛ Պոլսի և թէ՛ գա-  
ւառներու Պարտիճակի համար սա՛ ա-  
րաւոր կայ թէ՛ կրօնափոխ են. — Կրօ-  
նափոխ չեն, այլ կրօնամուր. — Բայց  
կը լայնամ թէ՛ ասով ալ կը հասկըլ-  
ուի որ ազգութեան են, եկեղեցի չա-  
ճակող. — Ո՛ր, զգալիաւ արար, հին բա-  
րի բարքերը չկան, ազգի ժամանակ-  
ները պարզութեան, միաւորութեան,  
անոնց յիշատակները հազիւ թէ առ-  
գին անգին քանի մը ցանցաւ միտըն-  
լու մէջ ցրուած են.

Ապէջ 40—45 տարի առաջ մեր մեծ  
հայրերուն օրերը, ինչպէս կը պատմուի,  
Պարտիճակ նշանակելի գիւղ մ'է եղած.  
բայց հիմա դժուարաւ պիտի ճանչնան  
անոնք՝ որ անոր անցեալ բարի ժամա-  
նակը կը յիշեն թաղային և անհատա-  
կան խնդիրներ իրենց կը կարգադրէին  
իրենց մէջ. Առաջնորդի երես հազիւ  
տարին մէջ անգամ. Ս. Յակոբի տունն  
առթիւ, կը տեսնէին. Եւ Առաջնորդ-  
ներն ալ լաւքի էին.

Այս տեսակ մը քրտնիկին մէջ չենը  
կրնար մանրամասնութիւններու մանկ  
զբաղեցնելու. համար անոնցով հաւո-  
րային ուշադրութիւնը, կընտրէ արեւմտ  
միայն՝ որբան առ հասարակ օգտակար

կրնայ ըլլալ դիտողութիւն մը իր լայն  
գիծերուն մէջ. Պարտիճակ նոյն դաւա-  
ռի է՛ն պատուաբեր և կարգաւոր գիւ-  
ղը, որ լայնանիւս բարձրաւանդակի մը  
վրայ հեծած է, ինչպէս կը տեսնուի  
իզմիտէն, ունի շատ սղորմիկ վիճակ  
մը, արգահատելի կայութիւն մը, որ  
ծնունդ առած է միայն այն կարգ մը  
վիշուն և աննշան հակառակութիւննե-  
րէ, որ միշտ կը բողբոյն թաղ. խոր-  
հուրդներուն ընտրութեանց անհոն. Բայց  
գիտէ՞ք ինչ տարբերութիւն կայ Պոլսոյ  
և գաւառաց թաղ. ընտրութիւններէն  
առաջ եկած հակառակութեանց մէջ.  
Հոն՝ գաւառներուն մէջ Առաջնորդ-  
եան և հակառակութեանցներուն է  
կոխը. հոս բարձի կոխ է, հոն Ա.  
առաջնորդի.

Պիտի խնդրները որ հանրային ուղի-  
ւորութիւնը արթննայ այդ սիրուն գիւ-  
ղին մէջ. և առանց սպասելու որ Ա-  
ռաջնորդական միջամտութիւնները հա-  
կառակութեան որոնները միայն աղ-  
բերին օրհնայ գիւղին մէջ, կը վա-  
րաբերը որ թաղային գործերը, վար-  
ժարանին վիճակը, Եկեղեցւոյ պայժա-  
նութիւնը իրենց հոգան. Բայց ասոր  
համար էական պայման մը կայ, այն-  
պէս չէ՞. — Մոռնալ հակառակութիւն-  
ները.

ՅՈՒՌ ԹՈՐՈՍԸ

Գ.

Բայց ապրեցաւ ինչո՞ք, շատ շատ ապ-  
րեցաւ, Իսկուհի՛ն այն աղջկը որուն հետ  
օրորոցի մէջ նշանուած էր, և զոր ծնող-  
քը ամուսնացուցած էին հիմակ հա-  
րուստ երիտասարդի մը հետ, զորմիտի աղ-  
խատման որ քսան տարիներէ ի վեր կը-  
նէին հէ՛գ Թորոսին, մեռաւ, փճացաւ ա-  
նոր ամբողջ սերունդը. Թորոս գեռ կապ-  
քէր զգալիակի, կապքէր դեռ, փողոցնե-  
րու մէջ, չուկան, քարելով ետեւէն խուճ  
խումբ մանուկներ, որոնք կը պոսային.  
— Եւ հա՛, ծուր ծուր... —

Անցորդները պահ մը կը կենային դի-  
տելու համար այն ծուր՝ որ աղաչանքի,  
զիջալու ձեւեր կընէր, յետոյ բմբռնողով  
մը կը հեռանային, ձգելով որ տղան ըզ-  
րօնուն անմիջապէս այդ անփառ ծուրին  
հետ, ու տղան բաժնիքուած աւելի կոգե-  
ւորուէին, աւելի տար խանդով մը պոսա-  
լու.

— Մոռնալ, ծուր... Եւ հա՛... —

Յիտուն տարի ապրեցաւ այդպէս, այ  
սիրին յիտուն տարի չորհրդանշան այդ  
սիրելի արարիւնքով.

Ա. վերջի վարկեանին երբ կը տապալ-  
կէր մահուան խառնակին վրայ, այդ ճիշ-  
մարտ Ամուրին, սիրոյ վրայ մտածելի  
գարձաւ, իրեն քաջաներէն, տառապանք  
ներէն կուգէ ազատել հէ՛գ որբուկ մը՝ ո-  
րուն գեղեցկութիւն չէր պարզեւած բնու-  
թիւնը. որուն հարստութիւն, ընտանքը  
մերժած էր տալ աշխարհ, այդ աղջկը մի  
գիտէ ինչ տաժանելի կեանք մը պիտի ու-  
նենար, իսպառ գիւղելով ամուսին մը ու-  
նենալու չնորհէին. Հիմակ մտածելի է ծու-  
րը, այդ աղբի օրը, գէշ աղէկ երկի մը  
պիտի ունենայ ու իր միամիտ փրկութեա-  
նութիւնով աւելի լաւ համարէր է գէշ է-  
րիկ մը ունենալ քան թէ բնաւ չունենալը.  
Այդ ծուր բոլանդակի դիտակցութեամբ  
է ըրած իր սղորմութիւնը. ու կերակակայմ  
տեսնել անոր անհուն կենդանութեամբ  
զուրկ գէժքին վրայ, գահաւորութեան  
մպիտ մը, պահաւորած անոր անհուն ու  
գալիահար չրթերուն մէջ աղի.

Առաջին ու վերջին մպիտը. Թերեւս յի-  
տուն տարիներէ ի վեր.

Յ. Ս.

Մ. ՊԵՐԹԼՈՅԻ ՃԱՆՈՐ

Առաջին Մ. Պերթլոյի ճառը զոր ար-  
տասանը Բարիկի դիտութեանց ակադե-  
միի տարեկան նիստին մէջ, գեղատ. 10/22ին,  
նիւթ ունենալով Ակադեմիի վախճանալ  
անդամներէն էրնէտ Մալաթի կեանքը. և  
աշխատասիրութիւնները Մ. Պերթլոյ, որ  
առան մը Արմատականներու (Մ. Պուր-  
ժուայի Նախարարութեան) արտաքին գոր-  
ծոց նախարար եղաւ, դիտութեանց ա-  
կադեմիի մշտնջենաւոր քարտուղարն է.  
Իրեն տարբարան՝ դիտութեան մէջ ա-  
ռաջին կարգի դիրք ունի.

Ճառը

Հանրաբանութիւնը եղական, և բող-  
ժանիկ դրոյմ ունեցող դիտութիւն մ'է,  
միանգամայն նկարագրական՝ բնական  
պատմութեան պէս, փորձառական՝ բնա-  
գիտութեան և տարբարանութեան պէս,  
միակամական՝ երկրաչափութեան պէս. Հան-  
րաբանութիւնը կը յազէ մարմիններուն  
ֆիզիքական կազմութեան, տարբարանա-  
կան համադրութեան, և երկրաչափի  
պատմութեան ամենէն ընդհանուր իւր-  
դիրները.

Գիտութիւնը կը մշակէ դայն այս գա-  
նազան անսահեանքով, թէ՛ Եւ իւրաքան-  
չիւրը անոնցմէ մէկուն համար մասնաւոր  
նախադրութիւն մը կուտենայ. Հին ժա-  
մանակները հանրաբանութեան յարգները  
բնագիտութեան էին, ինչպէս Պլինիոս, որ  
յաճախ իրենց նկարագրութեանց կը միա-  
ցնէին միջոցութեան և աստղագիտութեան  
խորհրդաւոր երեւակայութիւնը. Հանրա-  
բանութիւնը, անոնց գոյնը, անոնց կա-  
նաւաւոր ձեւերը և կրեւորները շատ  
կանուխէն ստեղծ մարդոց աչքին զարկին,  
և իմանկալին քարերուն այսպէս վերադ-  
րուցան թաղուն ու ժեր և գաղտնի աղ-  
ղեցութիւն մը կեանքին վրայ. Անոնց  
կազմութեան մէջ կը նշմարէին չեմ գի-  
տել ինչ խորունկ յօդակաւորութիւններ՝ ո-  
րոնց մէջ կը խորհրդէին բնութեան գաղտ-  
նի գորութեան միջամտութիւնը. Բայց  
մարդկային միտքը գեռ շատ տկար ըլլա-  
լով բարձրաւոր համար թիւի և գիտա-  
կան օրէնքի վերացական ծանօթութեան  
իրենք ամէն յօդակաւորութեան մէջ կը  
տեսնէր բարեւար կամ աղիտարար աստ-  
ուածութեանց ներգործութիւնը. Ծառ  
կանութիւն, ամէն թանկութեան բար յու-  
սուք մէջ՝ աստուած մը ազդեցութեան  
հպտակ, և այդ բարին տէր այդ աստ-  
ուածին պատկանելի կամ զոհ ըլլալու,  
պարագայեւ համար.

Արդի դիտութեան մեթոտներով հան-  
քերու կազմութեան գաղտնիքը լուսա-  
ւորուելով բերեղազգրութիւնը հիմնուեցաւ,  
որ հանրաբանութեան վրայ տպաւորեց  
երկրաչափական դրոյնը, որով կը տար-  
բերի նա այսօր, և որով փառաւորեցան  
մեր Ակադեմիին այնքան նշանակաւոր ան-  
դամները, Ռոմէ ալ Լի, Հօի, Պապի, և  
մին վերջին ժամանակակիցներէն զոր կո-  
րուսինը, Մալաթ. որուն կեանքը և հիմ-  
նական գործը պատկերացնելու նպատակ  
ունիմ այսօր.

Ըսելի չէ թէ Մալաթ օտար միացած ըլ-  
լայ միւս խնդիրներէն՝ որոնց վրայ կը ճա-  
ռէ դիտութիւնն առ հասարակ և ի մաս-  
նաւոր հանրաբանութեան մէջ եւս. Անոր  
մտքին լայնութիւնը և հանրաբան գործըն-  
մէջ անոր առած գաղտնի կարեւորութե-  
թիւնները կը տարկէին զիջել իստի նաեւ  
շատ տարբեր խնդիրներու վրայ, այսինքն  
զործնական խնդիրները՝ որ կը պատկանէին  
հանրաբան հանգործութեան, մասնաշնե-  
րու և գաղտնի հանգործութեան խաղա-  
կութեան, պատմական խնդիրները՝ որ կը  
պատկանէին երկրաչափական կազմութեան  
և հանգործութեան բնական համադրութեան  
պայմաններուն, խնդիրները որ այսօր կը  
տարածուին միջեւ իսկ հազուադիւս տար-

բերուն գաղտնի տեղին և բաժանման  
վրայ, չըտեն նոյն իսկ պարզ մարմիննե-  
րու ծննդան վրայ, Յանկուայի խնդիրները  
իրեն ամէն ուրիշ խնդիրներէ աւելի,  
այլ անոնց մէջ երբեմն եղբրու աղբեր  
խառնուած են, որոնց բնաւ չարեցաւ  
Մալաթի ճիշտագիտութեամբ, իր ճաշակով և  
բնութեամբ յստակ իրենք գաւառին մէջ  
ամփոփուած. Ընդհանրապէս խորատու-  
ուեցաւ բնագիտութեան ճիշտ ուսում-  
նասիրութեանց մէջ, որ հանրաբանու-  
թեան օրէնքները կը զուգորդէին տեսա-  
բանութեան և աստղագիտութեան օրի-  
նականներուն, և անոնց մէջտեղ դնէ ա-  
նգործանելի օգու մը.

Մալաթի կեանքը կրնայ նկատուիլ իւ-  
րեւ տարբար ֆրանտայի գիտականի մը մի-  
ջակ կեանքին, առանց ծայրայեղ ար-  
կածներու, հաստատելի իր պարագաներուն,  
և բոլորանունը՝ գաղափարային ուսումնա-  
սիրութեանց և ամէն աղբի գրադուսնե-  
րու. Անոր գաղափարներուն և խաղա-  
կութեանց զարգացումը լաւ ըմբռնելու  
համար, հարկաւոր է նախ այդ կեանքը  
գծել և ըսել թէ ինչպէս կանոնաւոր ճառ  
բանիքէ մտաւ պատուաբեր տապաքելի մը  
մէջ, որուն մէջտեղը զարգացումը ա-  
ռաջնորդեց զիջել միջնորդ ժամանակի  
մէջ իր մանկութեան երազած ամենա-  
բարձր դիրքին և վերին կարգի դիտական  
ըմբռնութեան, որոնք միշտ աճեցան,  
մասնակցին վերջապէս ամենաբարձր ընդ-  
հանրացումներու նիւթեղէն մասնակցութեան  
կազմութեան և հաստատարութեան վրայ.

(Մոտաջառ վաղ)

ԲԱՆԱԳՐԱԿԱՆ

ԻՏԱԿԱՆ

Պատերազմական նախարարը հրա-  
մայեց զինուորական գործարաններուն  
ամիսը 15,000 փրօքարան հրացան տե-  
ւելի պատրաստելու. Չորսովոր Բէլլու էր  
փախուքի բաւական քանակութեամբ ու-  
րառեալ զենքեր ունենալ առաջիկայ  
տարւոյ մեծ ազդակութեամբ համար.

— Սորբէթիմ հրամանատար Էլա-  
չոքենաւով Պէնտաթի մեկնեցաւ այս եր-  
կուշտիկի օր. Արքայական արտասովոր  
պատուիրակ տիրոջը ընդունեց ըա-  
ղաքային և վերտարական լիազօր իշխա-  
նութեամբ. Առ այժմ արտաքին գոր-  
ծոց նախարարը մեռելու Ձեքքի հարեւ-  
րապետին տեղ չպիտի անուանէ Չանդի-  
պարի ընդհ. հիւպատոսը. Սորբէթիմ  
հրամանատարի պաշտօնը պիտի գաղթի  
երբ խաղական կառավարութիւնը  
գաղթականութեան հոգը յանձնէ Պէ-  
նտաթի տեւաւորական նոր վարչու-  
թիւնին կառավարութիւնը գեռ այդ  
ընկերութեան ներկայացուցիչներուն  
հետ կատարելապէս համաձայնած չէ.  
Միայն սա՛ կէտը ստոյգ է որ խաղա-  
կան կառավարութիւնը 400,000 ոսկի  
Քրանք պիտի վճարէ ընկերութեան.  
Սորբէթիմ ամէն կարելի միջոցներով  
պիտի ջանայ դանել Ձեքքի արշաւնե-  
րին կատարել հեղինակները. թէ ինչ  
ընթացով խորելի է երաշխաւորել խաղ-  
ական հաստատութեանց ապահովու-  
թիւնը.

ԳԵՐՄԱՆԻԱ

Պէրլինի համալսարանին հաշակաւոր  
բնախօսը՝ Պաւ Ռէյ, յան մեռաւ 78 տա-  
րեկան.

ԱՆԳՐԻԱ

Թրանսլաւի արշաւանքին մէջ Տր.  
Ճէյմսընի երկու մեղակցները՝ Կրէյ

և Հուլիոս զննապետները, կիրակի օր  
ազատ արձակուեցան, իրենց բանտար-  
կութեան ժամանակը լրացած ըլլալով.  
Իրենց երկու միւս ընկերները բանտ  
են դեռ, և պիտի մնան շատ ամիսներ.  
Հուլիոս զննապետ անմիջապէս գնաց  
այցելել Ճէյմսի, որ կատարելապէս ա-  
ռողջացած կերելի.

ԼԻԻՊՍԴՈՒՆԻ

Խորհրդարանին նիստերը յետաձը-  
գուեցան մինչև յունիս 19, առանց  
կլմաւորեց. քուէարկուած ըլլալով խոր-  
հրդարանի նախագահը Մ. Սիմոն ք-  
սաւ երեսփոխաններուն մեծագոյն մա-  
սին. «Ճատ ճապարկ էք ձեր ճառե-  
րուն մէջ, ասոր համար կլմաւորեցը կը  
տառապի... բայց անպատիւն մէջ կը  
քարոզեմ և կը տարակուսիմ թէ խը-  
րատիս հետեւողներ ունենամ »

ՄԻԱՅՆԱՆ ՆԱՀԱՅԻՆԵՐ

Վալնիկլիքնէն կը հեռագրուի թէ՛  
Մ. Օրնէյ և Անգլիոյ դեսպանը համա-  
ձայնած են ընդհանուր իրաւարարու-  
թեան ատենին մը մասին մեծ Բրի-  
տանիոյ և Միացեալ Նահանգներուն վե-  
ճերը լուծելու համար. Վեյ անգամէ  
պիտի բաղկանայ այս դատարանը, և  
երբ Ամերիկացի և երբ Անգլիացի, Ե-  
թէ այս վեյը չկրնան համաձայնել, Եթէ  
նեղուք մը պիտի ընտրուի. Եթէ եր-  
կու տէրութեանց մին այս դատարա-  
նին որոշման դէմ բողոքէ, վճիւր պի-  
տի վերաբնուի երբ Անգլիայի և ե-  
րբ Ամերիկայի դատարաններէ բող-  
կալած ժողովը մը մէջ, որուն մեծա-  
մասնութեան որոշումը վերջնական և  
անվերաբնդի պիտի ըլլայ.

ԳՐԻՊՍԻ ԳՐՈՒՆԵՐԸ

Թայֆ լուր կուտայ որ Եւրոպական  
տէրութիւնները ծանուցած են Միաց-  
եալ Նահանգներուն թէ պէտք չէ ճըն-  
չում բանեցնել Սպանիոյ վրայ. Թայֆ  
կաւելցնէ թէ Գերմանիա Սպանիոյ կող-  
մը պիտի բանէ, եթէ Միացեալ Նա-  
հանգները Գաւառ ցիններուն կողմը բռն-  
են. Բայց Վալնիկլիքնէն պաշտօնա-  
պէս կը հերքուի թէ Գերմանիա կառա-  
վարութիւնը ծանուցած ըլլայ Ամերի-  
կայի կառավարութեան Սպանիոյ կող-  
մը բռնելու դիտաւորութիւն մը.

— Վեյլէր զորավար բաժն է օրագ-  
րի մը թիվակցին թէ Բինար-տէլ-Բի-  
ո դաւաւան իրադարձումը քանի մը օ-  
րուան դուրս է. Գաւառը վաղ գործ  
ունիմ, ըսաւ, իւրաքանչիւրը 800-1000  
հոգիէ բաղկացած՝ որ ամէն բան շար-  
գեցին, բայց ինտելիկներէն, որոնցով  
կապելին, և աստատմաններուն կը մեայ  
միայն կամ անօթի մեռելի կամ անձ-  
նատուր ըլլալ, Ես շատ աղէկ դիտեմ  
որ Մալաթ երբ ապանուեցաւ, երբ օր  
անցուցած էր առանց ուսելու, Չորս-  
ովորը գիտէ թէ ո՞ր կողմը առած է Մա-  
լաթը. Կրանք, բայց իր վարանի դիա-  
կը դուրս հանելու, որ պղծութիւն  
պիտի համարուի.

ԲԱՍԹՆԻՈՒՆ ՄԱՐՄՆՈՅԸ

ՓՈԽ ՄԱՐՄՆԻՈՒՆԸ

Անցեալ կիրակի կատարուեցաւ Բա-  
ստնի մարմնոյն վախադրութիւնը հա-  
մանուն հաստատութեան մէջ. Հոգեւոր  
պաշտօնը առաւուն եղաւ Նովոր-Տամ,  
ուր հրաւիրեալը Բաւթէրու ամենէն  
մատ ազգականներն ու մտերմներն էին.  
Սեղանը սեւերով ծածկուած էր և ամե-  
նապարզ մահարեւի մը վրայ դրուած

Ելն նշանաւոր գիտնականն մարմինը՝ Տիկին Բասթօն, մանչ զաւակը, աղ- ջիկն ու փեսան ներկայ էին հոգեւոր պաշտաման, նաեւ Բասթօնեան հաս- տատութեան անօրէն Մ. Տիւրք, Տր. Ռու- և Շանթիմէն ևն։ Յետոյ մարմինը դա- զաղի մը մէջ դրուելով տարուեցաւ իր հաստատութեան մէջ։ Եւստիքի կը հետեւէր բաղնախոյ խոմը մը՝ որուն մէջ կը նշմարուէին Հանրապետութեան նախագահին կողմէ Մորո հրամանատա- րը, Նախարարապետ Մ. Մեյիս, Խորհրդ- դարանի նախագահ Մ. Պրիստ, Հան- րային կրթութեան նախարար Մ. Ռամ- աս, և ուրիշ երեսօտներ, գիտնա- կաններ, արուեստագէտներ, ուսուս- կան, հոլանտական, անգլիական ներ- կայացուցիչներ։ Պատկերներ զրկուած էին Լոնտոնի բժշկական և վերարտադրանք- րեկերութեանց, Մոսկուայի պաթլի- քիական կաթոլիկ, իրիքիկի բը- ժըկական բնկերութեան կողմէ և ուրիշ շատերէ։ Հիւանդ կին մը զրկած էր պը- սակ մը հետեւեալ վերարտադրութեան։ Ան- Բասթօն, Երեւոյի հոգեւոր քննիչ, Հիւանդ կինը։

Գազաղին վրայ վերջին աղօթքը կարգաց Ռիւսա արքան։ այս պահուն Հանրապետութեան զաւակը Մ. Մ. Բասթօնը դողդոջուն ձեւով դադարել կը ցու- ցնէ, և լալով հետեւեալ խօսքերը կար- տասանէ Բասթօնեան հաստատու- թեան վարչ մարմնին անդամներուն։ «Տեառք, ձեզի կը յանձնեմ այս չիւրիմը՝ զոր մեր հօր համար կանգնեցուցի։ Կը խնդրեմ որ պահպանէք զայն իբրեւ լիանկալին աւանդ այս հաստատու- թեան մէջ՝ զոր այնքան կը սիրէք»։

Աւալին անգամ խօսեցաւ Բաս- թօնեան հաստատութեան վարչ մարմնին նախագահ Մ. Պրիստը, յետոյ յանուն կառավարութեան Մ. Ռամաս, հանրային կրթութեան նա- խարարը, որ այսպէս վերջացուց։ «Յիշ- պէս այն երանական երեւոյթանքն- րը՝ որոնց վրայ ժողովուրդը հրաշա- քործութիւններ կը տեսնէր, Բասթօ- ուի գերեզմանն ալ պիտի մնայ շրջա- պատուած դոգման հրաշալիստ լուսով մը։ Եւ ամէն նոր գիտել, ամէն գի- տական նոր վառար մ'առնի՛ր՝ որ դա- րաւեան հայրենիքին լուսեղէն պսակին վրայ, երկրին և արեւելքին երախտա- դիտութիւնը պիտի դառնայ դէպի այս սուղը՝ իբրեւ անի ամէն յետագայն յառաջդիմութեանց, և որ արեւելիս Իս- ռայանց տեղը դրաւեց դիտութեան յիշատակարաններուն մէջ։» Նախա- րարէն վերջ խօսեցաւ Բարիկի քաղա- քապետական ժողովոյ նախագահ Մ. Պատէն։ Իսկ Ֆրանսական Ակադեմիին կողմէ խօսեցաւ Մ. Կասթիլ Պուստի, մշակութեան քարտուղարը՝ ի գիմաց երեւոյթանքն անդամին Մ. Էրնէսթ Լը- կուվէի որ օգին ստատութեան պատ- ճառեւ չէր կրցած ներկայ գտնուիլ, և անոր գրած ճառը կարգաց Մ. Կաս-

թոն Պուստի, որ ըսաւ, «Տեառք, երկու մարդ կար Բասթօնի մէջ։ Գի- տուն մը և հաստատութիւն մը, բայց ինչ որ զարմանալի է, այդ երկու մարդիկ ըսաւ չղաղբեցան անոր մէջ բացարձակապէս տարբեր երկու ան- նաւորութիւններ ըլլալէ։ Ինք հաւա- սարապէս նախանձախնդիր էր երկու- քին իրաւանց Գ երկուքին համար ալ բացարձակ աղաւթութիւն կը պահան- ջէր, և Ֆրանսական Ակադեմիին մէջ իր ընդունելութեան ճառը պերճաւոր վկայութիւն մ'է այդ զօրեղ և արտա- սովոր երկուութեան։ Մեզմէ ո՛վ չի ին- չէր յիշատակաց արժանի այն նիստը, մեր կամարը, կարծեմ, լսած չէր իր- նաւ անտէկ շնորհը։ Տրամախո- հութեան հիանալի զօրութեամբ նախ և առաջ իր փորձառական մեթո- տին վերլուծութիւնը ըրաւ։ Ձգա- ցուց անոր բալոր եղբակցու- թիւնները, ոչ մէկ գիտուն երեւ- ցաւ իրմէն տեղի ճշմարտապէս գի- տութեան մարդ, այսինքն ոչ մէկ գի- տուն իր ապացուցութեանց մէջ զրաւ այնքան խստապահանջութիւն և իր սկզբունքներուն վրայ այնքան աւելի համոզում։ Յետոյ իր աշխատութեանց բնութեանց յորհորհար՝ ըսալ մ'աւելի աւանելու արարչագործութեանց դադո- նեաց և անհուն ռուսաւորութեան մէջ, գոչեց, ըսաւ որ անհուն զաղա- վարը կարտադրուէ, այդ հաստատու- թեան մէջ կը կուտակէ աւելի գեր- բնական, որքան չիկայ բոլոր կոսմոս- իս հրաշքներուն մէջ, վասնզի ան- հունին նկարագիրն է անբացատրելի մնալ և ի հարկէ ընդունուիլ։ Երբ ան- հունի ծանօթութիւնը զայն տիրէ մեր իմացականութեան մէջ զայն միայն ը- նել պէտք է։ Երբայդ Պրիստը է ներում խնդրել այն ատեն բանակա- նութիւնէն։ Ժառանգական կեանքին զապանակները ուժգին կը ձգտին, և Բասթօնի վրեժ յիշատակէն բռնուած կըլլայ մարդ իրեզիկը։

Գերբնականը կը մտնէ մեր սրտին մէջ, Աստուծոյ գաղափարն ալ անհու- ճի գաղափարն մէկ ձեւն է։ Եւ Խորին յազմամբ մը արտասանուած այս խօս- քերը խանդավառութեան և հաւատքի սարսուռ մը քաղցրեցին ամբողջ ժողո- վին մէջ։ Եւստիքի լիքացին ամէն կող- մէ։ Վասնզի այդ խօսքը կը համապա- տասանէր բերաւոր սրտերու ամի- նաբունու պէտքը։ Միմայպէս կը սխա- լին անոնք որ կը կարծեն թէ աշխա- հը անաստուածներու և հաւատաց- եալներու բաժնուած է։ այս երկու ծա- րերուն մէջտեղ կը տատանի հոյ՜ մը խաղաղարդ գիտակցութեանց, անհուն- գիտութեան վրայ լեզուն մտքերու, որ կը զգան թէ Աստուծոյ գաղափարը խոյս կուտայ իրենցմէ։ Կը փնտռեն, ալ չեն գտնիր, կը պաղատին աղօթքով, ալ անոր ձայնը չեն լսեր։

Միակ հաւատալովը, որ անոնց կը

մնայ, այլ եւս չհաւատալու դառն կեկիծն է։ Ինչ աւելի բարձր վերացում, բան այդպիսի հաւատքի մը գաւառան- քը՝ որ հրապարակաւ կը թռչի այն- պիսի բերնէ մը։ Այս, և թէ Բասթօ- ուի գիտնական գիտերը մարդկային ողորմելի մարմնայն բարեբարը ըրին զինք, կրնանք ըսել թէ իր անձին վրայ գիտութիւնն ու հաւատքը համաձայ- նեցնելով, հոգիներու բարեբարն ե- զաւաւ։

Այս սքանչելի և հիւթեղ ճառէն վերջ, Լոնտոնի արքայական Բնկերու- թեան նախագահ Սրբ Ճօզէֆ Լիւրը Ֆրանսերէն լեզուաւ յանուն արք. ին- կերութեան և Բրիտանական կաճախին ողջունեց Բասթօնի յիշատակը։ Յիշե- ցուց թէ չորս տարի առաջ Բասթօնի յորէնանին առթիւ պատիւ ունեցաւ անոր մատուցանելու լոգմանակ աշ- խարհի բժշկութեան և վերարտադրու- թեան սքանչացման մեծարանքները։ Խորին տխրութեամբ հիմա ներկայ կ'ը- լայ մեծ գիտնականին յուղարկաւորու- թեան հանգիստը։

Հունի ապա խօսեցան գիտութեանց Ակադեմիին կողմէ Մ. Փոնիւ, բժշկա- կան Ակադեմիին կողմէ Մ. Պերքըրոն, բարձրագոյն վարժապետանոցի անօրէն Մ. Փոքր Բէնտ, երկրագործութեան աղգալին Բնկերութեան կողմէ Մ. Լուի Բափ, ուսանողաց ընդհանուր Բնկե- րակցութեան կողմէ Մ. Բօլ թիսիւ։

Բասթօնեան հաստատութեան ար- նօրէն Մ. Տիւրք ճառերուն շարքը փա- կեց հետեւեալ խօսքերով։ «Եւ հիմա բոլոր այս մեծարանքներէն վերջ պէտք է պատուակալ թիկնապահութիւն մը կազմուի այս աճիւններուն շուրջ՝ որ մեծ հանգստեան մէջ պիտի մտնեն։ Ոչ թէ նախանձով պահել զանոնք և ա- նոնց մուտքը արգելիլ։ Բասթօն Եկե- ղեցի մը շինեց՝ որուն դռները բաց են, այսօր իր աշակերտները լեզէն կը կազ- մեն, ցրուեց տարածեց զանոնք հանքա- բանութեան, տարրարութեան, բը- ժըկութեան, առողջապահութեան, երկրագործութեան աշխատանոցներու մէջ, վերջապէս ամենուրեք ուր իմա- փանցել իրենց նոր իմացականութիւնը՝ զոր ինք բերաւ աշխարհի մէջ։

Սատուել, վասն զի իր դործը բազ- մաղան է և զանազանակ, պէտք է տեղ մ'ըլլայ, ուր ամբողջովին ներկայացուի, ուր իր նոր և եկամուտ աշակերտները ապահով ըլլան գտնելու ուսուցչին վար- քապետութիւնը ընդգայնմանով և եղանակաւորութեամբ, զոր ժամանակը պիտի ապաւորէ անոր վրայ։ Այս աղ- նիւ և դժուարին դործը Բասթօն իր անուած ատեն ձգեց իր աշխատակից- ներուն։ Չպիտի ներքեւ մտնանք թէ այս գերեզմանը ոչ միայն բարեպաշ- տութեան յիշատակ մը կը յիշեցնէ, ալ պէտք է պատուով նաեւ շարժու- մի և կեանքի գործերով։ Եւ իրաւունք աշխատանոցներու մօտին է նա, Հոս

բնակողը այն աստիճան սիրեց գիտու- թիւնը, որ այնտեղ խալտայ մինչեւ իր ոսկերեքը երբ սա բարակ միջնորմէն հասնի անոր գիտի մը արձագանդը։» Ապա բոլոր ներկաները անցան Բաս- թօնի գերեզմանին առջեւէն և քա- շուեցան, խորապէս յուզուած այս սըր- տայոյ արարողութիւնէն։

## ՃԵՌԱԳԻՐ

Ս Ե Ր Գ Ի Ա

Պէկրատ. 30 Դեկտ. — Նախարարու- թիւնը վերջնականապէս կազմուեցաւ հե- տեւեալ կերպով. Մ. Սիմիշ՝ նախարար ար- տաքին գործոց և Նախարարապետ, զօրա- վար Միլիովիչ՝ պատերազմական նախարար. Մ. Վելիկովիչ՝ հանրային շինութեանց նախարար. Մ. Վալիշ՝ երեսօտեց նախա- րար. Մ. Նիքա Նորիշիւն՝ ներքին գործոց նախարար. Մ. Նիքոլիչ կրօնի նախարար. Մ. Քլեյնիչ երկրագործութեան նախարար և Մ. Միլիովիչ՝ արդարութեան (գա- տակալ) նախարար. Կր Ռուի թէ նոր նա- խարարութիւն Պէկրատի մէջ լաւ տալա- ւորութիւն ըրած է հանրային կարծիքին վրայ։

ԵԼՄՏԻՍԻԱՆ ՏԱԳԻՍՈՒՅ ԵՐԿՈՒՄԻՆ ՄԵՋ

Երկրայ. 30 Դեկտ. — Վերջին առեւ- տարական և երմտական շահագործութեանց մէջ բռնուած 12 դրամատներն ունեւ- կութիւն հոգալիւն առաջ բերին երմտա- կան մեծ տագնապ մը։

ԿԱՅԻՂԱՍԻ ՄԵՋ ՊԱՅՄԱՆՈՒՄԸ

Լիւպոնա, 30 Դեկտ. — Լիւպոնայի գոր- ծարանին կաղաչափերէն մէկը պայմեցաւ սպաննելով 30 դրամաւոր։

ՓԻԼԻՊԻՆԻ ԿԴՂԻՆԵՐ

Մատրիւ. 30 Դեկտ. — Մանիլէի հե- ապիր մը կը ծանուցանէ թէ Ռիճայ ապա- տաբապետը հրաջանի բռնած է Տ քաղա- քացի և 3 ժողովրդապետ (երեց) որ իր բանտարկեալներն էին։

ՊՈԼԿԱՐՈՒ

Ս. Ֆիւ. 30 Դեկտ. — Կառավարութիւնը որոշեց զինուորական մնայուն բանակա- տեղի մը հաստատել։

ԱԻՍՏԱՆԻՍ

Լոնտոն, 30 Դեկտ. — Մէլպուրնէի հա- սած հեռագիր մը կը ծանուցանէ թէ բուռն միջիկ մը տագնապից բրած է Նելիթիէր քաղաքը, զորմիջիկ զոհեր պատճառելով։ Նիլիական միջ տեսնելն ահապի են։

ԲԱՆԴԱ

Մատրիւ. 30 Դեկտ. — Բուզապէն կը հեռագրուի թէ նոր ընդհարում մը տեղի ունեցած է Բուզապէսի բռնած և Վելիկի զօրքերուն մէջ։ Բուզապէսի մեծ կո- բուտ ունեցած են։

ՓԻԼԻՊԻՆԻ ԿԴՂԻՆԵՐ

Մատրիւ. 30 Դեկտ. — Գաղթապետու- թեան նախարարը ընդօրինակ հեռագրէ իմացած է թէ ապստամբները արիւնահեղ պարտութիւն մը կը կրած են Սան Մաթիւ, Փիլիպպին կողմէն։

ՅԵՐԿՈՒՄ

Մատրիւ. 30 Դեկտ. — Քարտուստի մէջ Անթիպիան հիւպատոսարանին վրայ եղած յարձակումը կը հերքուի բացարձա- կապէս։

## ՄԶԻՆԻՐԵ

ԼՈՒՐԵՐ

Ամեն Ս. Պատրիարք Հայրը երէկ հանդիսաւոր կերպով Ֆէնէր, յունաց պատրիարքարանը գնաց ժամը Տիւ, ալ- ցելով թիւն տալու տիեզերական պատ- րիարքին, Նորին Ամենապատուութեան կրկնեանային Տ. Գրիգորիս Արքեպ. Յովհաննէ-եան, Տ. Հմայեակ եպիսկո- փմաքեան, Տ. Նիկիշ Ծ. Վ. Գուրեան, Տ. Վասեն Ծ. Վ. Յակոբեան, Տ Բար- քէն և Տ. Մուշեղ վարդապետները, Գա- ղաքական ժողովէն ալ վսեմ. Գրիգոր Էֆ. Խարեան, Վսեմ. Զարեհ Էֆ. Տիլ- պէր, Սեպուհ Էֆ. Տեմիրճիպաշեան և պատրիարքարանի քարու - քէհնաւոր վսեմ. Արքեպ. Էֆ. Պրէնիկեան։

Ամեն Ս. Պատրիարքը ընդունուեցաւ Ֆէնէրի Պատրիարքարանի գահիճին մէջ Տիեզերական Պատրիարք Տ. Անթիմոսէն, որ չընկալատուած էր Սինդի անդամ չորս մեծարապետներէ և խառն ժողո- վի մի քանի անդամներէն։

Տեսակցութիւնը շատ սիրալիք եղաւ։ Թարգմանի պաշտօն կատարեց Գաղ. ժողովի անդամներէն վսեմ. Զարեհ Էֆ. Տիլպէր։

Յետոյ Ս. Պատրիարք Հայրը իշաւ եկեղեցի ու Հայ լեզուով կարճ, պեր- ճախօս բանասիրութիւն մ'ըրաւ երկու քոյր եկեղեցիներու յարաբերութեանց վրայ և Աւետարանը համարեց յետոյ հրաժեշտ առաւ։

Միւսին հանդիսաւորութեամբ Ս. Պատրիարք Հայրը գնաց Օրթոդոքս պաշտարաց Գեր. Երզրարին փոխա- րած աղկութեան։ Գեր. Երզրարէն կողմէ մեծ յարգանքով ընդունուեցաւ։ Գիտնականութեամբ խոսակցութիւնները ֆը- րանսերէն լեզուով էին։

## ՃԵՌԻՆ ԶԱՅՐԵՐ

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ

Քաղաքային պաշտօնէից յանձնա- ժողովին անգամ նշանակուեցաւ մար- արին վերատեսչութեան խորհրդականի փոխանարդ Մեծաւատին Էֆ.

Գոսովի զօրաբանին արմուրքի փա- ճառական Բաղկորիչայը Մեծաւատ Աթո- աղաի իւրախ երկրորդ աստիճան և Վիլը- թիլիլին Սեմէն Էֆ. Սանիէլի առա- յին աստիճանը շնորհուեցաւ, իրենց բարուր ծառայութեանը համար։

ՊԱՏՈՒՆԱԿԱՆ

Կայս. թիկնապահ և Արքունի ախտ- ապետ Ֆալիք փաշայի և հեծելազօրքի գնդապետ Մեհմէտ պէլի երկրորդ կար- ղի Մեհմէտի շնորհուեցաւ, իրենց բար- ւոր ծառայութեանը համար։

ԹԵՐԹՈՒՆ ՄԱՍԻՍԻԱՆ (20)

## ՍԱՌՈՅՑԻ ԱՆԱՊԱՍԸ

### ԺԻՒԼ ՎԵՐՆ

Վերջապէս ապրիլ Տին պաշարները, ուսուիրը և ռազմամթերքը արամ գիտնի վրայ կը գտնուէին և կատարելապէս ապա- հով. միջնորդները իւրօրին կողմը կա- ռուցուած էին, և վառարաններ սարա- հարթին հարաւի կողմը, իւրաքանչիւր տունին մէջ մի ծայրէն զրկի՞ն վախճու- ոտք հեծի։ Տեսակ մը շնորհ չիմուեցաւ միջնորդներուն մօտ կրօնականական յոյգիւրուն համար, և Տըթթորը պատուեց զայն «Տըթթոր» անունով։ Տըթ մասնա- կից էր ինքը հասարակաց բնակարանին։

Այն ատեն Տըթթորը անցաւ տեղւոյն պաշարանութեան միջնորդներուն իր հսկո- ղութեան տակ սարահարթը շրջապատու- ցաւ ստոյգէ ճշմարիտ պատնիշաւորմամբ մը՝ որ գերեզմանները ամէն արշաւան- քէ։ Անոր բարձրութիւնը բնական հողա- բերք մը կը ձեւաւորէր, և որովհետեւ ոչ դուրս ելած և ոչ ներս մտած տեղ ունէր, հաւասարապէս ամուր էր ամէն երեսնե- րուն վրայ։ Տըթթորը պաշարանութեան

այս դրութիւնը կազմակերպելով՝ անոր մարդիկ կերպով կը յիշեցնէր արժանաւոր հօրեղբայրն Պրիլ տը Սիւրին, որուն հե- ղահամբայ բարեմտութիւնը և շարունակ միւսնայն բարքը ունէր։ Պէտք էր զայն տեսնել, երբ կը հաւաքէ ներսի կողմի գա- ռիվայրին հակամը, որմարդիկն (ճէպի) ծուծիւնը և մայրին լայնութիւնը. բայց այդ բոլոր աշխատութիւնը այնքան զիւրի կըլլար կամակատար ձիւնի միջոցաւ՝ որ ճշմարիտ հաճոյք մ'էր այն, և արիւն հաւ- տարադէժը մինչեւ եօթը ոտք թանձրու- թիւն տուաւ իր ստոյգէ պատին. սարա- հարթը արդէն ծովուն զօգին վրայ նայե- լուն համար, պէտք չունեցաւ շինելու ոչ արտաքին որմաքուր, ոչ գոգուր, ոչ դաժմայր։ Տալիքին ձիւնէ հեղեքը՝ սարա- հարթին շրջա կողմը դառնեց զիւր, և Կա- ղար ապակառնին պարտ էր բռնել և Կու- ճին երկու կողմերուն կը կցուէր։ Բանա- կազօրութեան այս գործողութիւնները ա- լաբանեցան ապրիլ 15ին։ Ամբողջ պահա- րան չուներ, և Տըթթորը իրիտ հպարտ կերեւէր իր գործին մէջ։

Եւ իրաւունք այս ամրապահեաւ շրջա- պատը կրնար ընդ երկար գիմանայ Եսթի- մանելու ցեղի մը, և ինք այդ տեսակ ինչ- նամիներ կրէր պատահէին այդ տեսակ լայնութեան աստիճանի մը տակ, այս ե- ղերքին վրայ մարդկային էակներու հետք մ'անգամ չկար։ Հաթրաւ ծովուն գոգին

ձեւը ճշգրտով, շտեռաւ բնաւ մին այն հիւզակներէն, որ սովորաբար կը գտնուին կրօնականական ցեղերու յաճախած ծովա- կանց վրայ։ Ֆորալըքի և Փորֆորի նաւա- րեկները այս անձամբ գիտնոր կոթորնե- րէն առաջինները ըլլալ կը թուէին։

Բայց ինք մարդիկն վախ չկար, անա- տուններ կրնային տհալուր ըլլալ, և այն- պէս պաշտպանուած ամբողջ պիտի սպաս- տարէր այս սակաւութիւն պահապանները ա- նոնց յարձակումներուն դէմ։

ԳՈՒՆԻ Լ.

ԲԱՐՏԻՍՏԱՐԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Ձմեռեալ այս պատրաստութեանց մի- ջոցին՝ Ալթման բոլորովին գտած էր իր ուժերը և իր առողջութիւնը։ Նոյն իսկ կրցաւ բիւլ որ քաղաքը ըլլալ նաւուն թե- անքը դուրս հանելու համար։ Անոր կորովի և ուժեղ կազմուածքը վերջապէս յաղթեց հիւանդութեան, և զեղիւթիւնը չկրցաւ երկար ատեն զիմաղիւլ անոր արեան ու- ժին։

Գիտնական ծնաւ իր մէջ Միւսեալ Նա- հանգիներուն կարելեղ և արեւնոտ անհա- տը, աստեղը և մոտեցի մարքը, յամա- նկարագրով մը օժտուած, ձեւերից Ամե- րիկացին, ինչո՞ք, յո՞ք ամէն բանի. ընդ Նիւ Նորքէն էր, և իր տղայութենէն

ի վեր կը նաւարկէր, ինչպէս որ հասցուց իր նոր ընկերներուն։ Իր նաւը՝ Փորֆոր՝ սարսուռ և ծով ինքնուրուած էր Միւսեալ Նահանգաց Հայրուն վաճառականներու ընկերութեան մը կողմէն, որուն պետն էր հոգալուոր Մ. Կրիմէլ (\*):

Ինչ ինչ տղերքներ կային Հաթրաի և անոր միջեւ, նկարագրի հանդիսութիւն- ներ, բայց ոչ համարութիւն։ Երեւցած նմանութիւնը այս երկու մարդիկը իրարու բարեկամ ընկու- ընութիւնը չուներ։ Ընդ- հակառակին Արքէն գիտու- ըր պիտի կըր- նար գուշակել անոնց մէջ ծանր անհամա- ձայնութիւններ. այսպէս Ալթման տեղի համարձակութիւն ցոյց տալ կեղծելով հան- ղերձ, նուազ արեկո՞ծ էր քան Հաթրաւ. աւելի անփութութիւն կեղծելով՝ նուազ գիւրտութիւն ունէր. անոր բաց նկարա- ղերը նուազագին

ՀԱՆՐԱՊԵՏԱՆ, Դեկտ. 19. 31 1896

